

На культуре островковых  $\beta$ -клеток поджелудочной железы в опытах *in vitro* показано усиление флюоресценции инсулина при добавлении ЭОС, ГАМК или глутамина, особенно выраженное в случае первого. Добавление стрептозотоцина к культуре островковых  $\beta$ -клеток поджелудочной железы вызывает резкое тушение флюоресценции инсулина, которое подавляется как ЭОС, так и ГАМК и глутамином. Полученные данные свидетельствуют о перспективности применения ГАМК-генерирующих агентов (глутамин, агонисты ГАМК, ингибиторы ГАМК-трансаминазы) в профилактике и лечении сахарного диабета.

*К.С. - нейроактивные аминокислоты, этаноламин-O-сульфат, глутамин, мозг, панкреас, диабет*

ԳԱԼԱՐՄԻՆԻ և ՆՐԱ ԱԾԱՑՅԱԼՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇ  
ՖՈՍՖԱՏԱԶՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՍՊԻՏԱԿ ԱՌՆԵՏՆԵՐԻ  
ՏԱՐԲԵՐ ՕՐԳԱՆՆԵՐՈՒՄ

Հովհաննիսյան Մ. Հ.<sup>1</sup>, Պարոնյան Զ. Խ.<sup>2</sup>, Տեր-Թադևոսյան Լ. Պ.<sup>2</sup>,  
Առաքելյան Լ. Ն.<sup>2</sup>

<sup>1</sup> Գավառի Պետական Համալսարան

<sup>2</sup>ՀՀ ԳԱԱ Կենսաբիոլոգի ինստիտուտ

Ածխաջրաֆոսֆատային փոխանակության ֆերմենտների ակտիվության կարգավորման ուսումնասիրությունը օրգանիզմի տարբեր ֆիզիոլոգիական և ախտաբանական պայմաններում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի փոխանակության ընդացքում նրանց ունեցած կարևոր ֆիզիոլոգիական նշանակության, և կլինիկայում՝ որպես տարբեր հիվանդությունների (քաղցկեղ, լյարդի և ոսկրային հիվանդություններ, նյարդային համակարգի խանգարումներ և

այլն) ինֆորմացիոն մարկերներ կիրառման առումով: Ածխա- ջրաֆուֆորային փոխանակության նոր կարգավորիչների որո- նումը հանդիսանում է ժամանակակից կենսաբժշկության խնդիր- ներից մեկը: Հիպորթալամուսի պրոլինով հարուստ պեպտիդ-1-ը՝ ցուցաբերում է կենսաբանական ակտիվության լայն սպեկտր՝ իմունամոդուլյատոր, հակառուուցքային, ներոպաշտապանիչ, հա- կաօքսիդանտային և արյունաստեղծ: Ենելով վերոհիշյալից պեպտիդը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ածխա- ջրաֆուֆորական փոխանակության կարգավորման գործում ինչ- պես առողջ, այնպես էլ ախտահարված օրգանիզմում: Ուսումնա- սիրվել է այդ պեպտիդի ազդեցությունը ֆոսֆո-մոնոկաթերազների (հիմնային և թթու ֆոսֆատազներ) ակտի-վության կարգավորման գործում:

Հետիշեմիկ փոփոխություններից կարևորագույններից են համարվում հիշողության և ուսուցման գործընթացի խանգա- րումները, որոնք կաթվածից հետո զարգացող կլինիկայում ամենահաճախ հանդիպող շեղումներից են: Այսպես, վիճա- կագրական տվյալները վկայում են, որ սուր իշեմիկ խանգա- րումներից հետո կախված տարբեր գործոններից, 20-80% հիվան- դների մոտ արձանագրվում է հիշողության և կողնիտիվ խանգա- րումները:

Այսպիսով, զալարմինը օրգանիզմի մի շարք ախտածին վիճակներում հանդիսանում է ածխաջրաֆուֆորային փոխանա- կության կարգավորիչ: Այս տվյալները ճանապարհ են հարթում բժշկության մեջ նրա գործնական կիրառման համար ածխա- ջրաֆուֆորային փոխանակության ֆերմենտների ակտիվության կարգավորման գործում նոր դեղանյութերի մշակման ուղղությամբ:

Հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ զալարմինի ազդեցության ներքո (*in vitro*) սպիտակ առնեսների օրգաններում հիմնային և թթվային ֆոսֆատազների ակտի- վությունը ենթարկվում է նշանակալից փոփոխության: Երի- կամներում, յարդում և սրտամկանում նկատվում է նշված

ֆերմենտների ակտիվության բարձրացում 20-50%: Երիկամների ՀՖ-ի ակտիվությունը հասնում է 90%, մինչդեռ ուղեղի նույն ֆերմենտի ակտիվությունը ընկճպում է 30%: Ստացված տվյալները վկայում են, որ ուղեղի պրոլինով հարուստ պոլիակուտիդը մասնակցում է տարբեր օրգանների փոխանակության պրոցեսներում:

**ՆԱԴՐԻ ՊԱՐՈՒԱԿՈՂ ԼԻՊՈՎՈՏԵԽՆԻ (ՆԼՊ) և ՆԱԴՐԻ  
ՕՔՍԻԴԱԶԻ (NOX) ՄԻՋԱ ԿԱԶՍՎԱԾ ՍՈՒՊԵՐՕՔՍԻԴ-  
ԳԵՆԵՐԱՑՆՈՂ ԱՍՈՑԻԱՏԻ ՍՏԱՑՈՒՄ և ՆԼՊ-ՈՎ ԱՌՆԵՏԻ  
ՈՍԿՐՄԾՈՒԾԻ ԲԶԻՉՆԵՐԻ, ԿՈՐԻՉՆԵՐԻ ՈՒ  
ՄԻՏՈՔՇՈՆԴԻՈՒՄՆԵՐԻ ԹԱՐԱՄԹՆԵՐԻ և ԻՍՈՒՆԱՅԻՆ  
ԲԶՋԱԹԱՂԱՆԹՆԵՐԻ NOX-ԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ**

Սիմոնյան Ռ.Ս.<sup>1</sup>, Բարայան Մ.Ա.<sup>1</sup>, Սիմոնյան Գ.Ս.<sup>1</sup>, Ֆեսյան Ս.Ս.<sup>2</sup>,  
Սիմոնյան Մ.Ա.<sup>1</sup>

<sup>1</sup>ՀՀ ԳԱԱ Հ.Բունիաթյանի անվան Կենսաքիմիայի ինստիտուտ  
<sup>2</sup>Երևանի Մ.Հերացու անվան Պետական բժշկական համալսարան  
[ruzan.simonyan@gmail.com](mailto:ruzan.simonyan@gmail.com)

Առաջին անգամ սպիտակ առնետների ուկրածուծի բջիջների, կորիզների ու միտոքրոնդրիումների թաղանքներից անջատվել ու մաքրվել են սուպերօրսիդ ( $O_2$ )-գեներացնող ասոցիատի իզոլաներ, կազմված ՆԱԴՐԻ պարունակող լիպո-պրոտեինից (ՆԼՊ) ու ՆԱԴՐԻ օքսիդազի թերմինալ իզոլաների գումարային ֆրակցիայից ( $Nox1+Nox2$ ) [ՆԼՊ-Nox]: Վակուում լիոֆիլացումից հետո ՆԼՊ-Nox-ի ասոցիատի իզոլաների տեսակարար քանակները, ստացված 1գ ուկրածուծի բջիջների, կորիզների ու միտոքրոնդրիումների թաղանքներից համապա-